

Հովհաննես Զեքիջյան 90

Լրացան 33 ազգային հերոս, Խորհրդային Միության ժողովրդական արտիստ, Խորհրդային Միության պետական մրցանակի դափնեկիր, պրոֆեսոր, դիրիժոր Հովհաննես Զեքիջյանի ծննդյան 90-ամյա և կատարողական գործունեության 75-ամյա հոբելյանները:

Այդ կապակցությամբ 2019 թվականի հունիսի 12-ին և 13-ին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ գումարվեց «Հովհաննես Զեքիջյան-90» գիտական նստաշրջանը, որի բացումն ու լիազումար միատեղ տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ մյուս երկու նիստերը՝ ՀՀ ԳԱԱ գիտա-ժողովների տանը (Արզական):

Գիտական նստաշրջանի նպատակն էր՝ համակողմանիորեն ներկայացնել Հովհաննես Զեքիջյանի կյանքն ու ստեղծագործական գործունեությունը:

Բացման խոսքում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանն անդրադարձավ ՀՀ ԳԱ ակադեմիայի, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտոր, ՀՀ ԳԱԱ ար-

ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆՆԵՐՆԵՐԻ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԵՔԻՋՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆԸ

վեստի ինստիտուտի գիտական խորհրդի անդամ Հովհաննես Զեքիջյանի միջև համագործակցությամբ, որն առավել բազմաբնույթ ու բազմակողմանի է դարձել վերջին տարիներին, և թերթեց այդ համագործակցության էությունը, որոնցից մեկն էլ այս նստաշրջանն է:

Գիտական նստաշրջանի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ով մասնավորապես ասաց. «Հարգարժան պրոֆեսոր, մեր հին և նոր բարեկամ (ես նկատի ունեմ գիտությունների ակադեմիան):

Գիտաժողովի հարգելի մասնակիցներ:

Թույլ տվեք ձեզ բոլորիդ ողջունել գիտությունների ազգային ակադեմիայում և ցանկանալ գիտաժողովին հետաքրքիր քննարկումներ: Հսկայական է այն ներդրումը, որ Մանեստրոն բերել է մեր մշակույթի զարգացման, այնուհետև՝ նրա տարածման, աշխարհին ներկայացման ասպարեզում: Ես մի խորհրդանշական բանի մասին եմ ուզում ասել:

Մենք ունենք երկու մտավորական, որոնք մեր հայությանը, նրա կարողությունները ներկայացրել են աշխարհին: Առաջինը, Վիկտոր Համբարձումյանն է, որն ամբողջ աշխարհին ներկայացրեց մեր գիտությունը, մեր գիտության նվաճումները: Որոշ դեպքերում Հայաստանը՝ որպես երկիր, պետություն, ճանաչում են որպես Վիկտոր Համբարձումյանի հայրենիք:

Մյուս մտավորականը, որը փաստորեն նույն խնդիրն է լուծել և մինչև հիմա շարունակում է լուծել, մեր Մանեստրոն է՝ պրոֆեսոր Զեքիջյանը, որը մեր՝ հայ մշակույթի կոթողները, մեր երգերը, մեր ե-



րաժշտության նվաճումները, մեր կոմպոզիտորների լավագույն ստեղծագործությունները ներկայացրել է աշխարհի ժողովուրդներին:

Դժվար է պատկերացնել աշխարհի որևէ երկիր, որտեղ Մանեստրոն իր երգչախմբով ելույթներ ունեցած չլինի»: Հավարտ խոսքի, ՀՀ ԳԱԱ նախագահը, ևս մեկ անգամ շնորհավորելով հոբելյարին, ասաց. «Ձեր 95-ամյակը չգիտեմ, բայց 100-ամյակը անպայման պետք է նշենք: Ես, ինչպես նաև այստեղ բոլոր մտածողները, համոզված եմ, որ Դուք լինելու եք, մենք էլ կողքից կգանք: Ով հասցրեց, կգա: Ով չի հասցնի, թող մտածի իր մասին»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանի և նախարարության ամբողջ անձնակազմի անունից նստաշրջանի մասնակիցներին ողջունեց փոխնախարար, արվեստագիտության թեկնածու Արա Խզմայանը, ով նկատեց, որ առանց Հ.Զեքիջյանի անձի անպատկերացելի է

երգչախմբային արվեստը, և ընդգծեց նրա հսկայական դերն առհասարակ մշակույթի տիրույթում՝ երգչախմբային արվեստի դիրքավորման առումով: Ա. Խզմայանը կարևորեց Մանեստրոնի դերը որպես հասարակության համար կողմնորոշիչ և չափանիշ, ով զգաստացնում և սթափեցնում է մասնագիտական հանրությանը:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ամունից ողջունելի խոսք ասաց և գիտաժողովին հաջողություն մաղթեց բաժանմունքի ակադեմիկոս-բարոտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, ով գիտաժողովը բնորոշեց որպես առանձնահատուկ, քանի որ զեկուցողները փորձելու են ընդհանրացնել և արժևորել մի մարդու ստեղծագործական գործունեություն, որը դարձել է կենդանի լեգենդ, դասական:

Հայաստանի կոմպոզիտորների միության նախագահ, կոմպոզիտոր Արամ Սաթյանը ընդգծեց, որ կոմպոզիտորական արվեստն առանց կատարողա-

➤4

ՀՀ ԳԱԱ-ի ձեռք բերած սարքի շնորհիվ քիմիական գիտությունը Հայաստանում կբարձրանա մեր մակարդակի

Սույն թվականի հունիսի 25-ին ՀՀ ԳԱԱ օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնում տեղի ունեցավ միջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրի բացման արարողությունը: Միջոցառմանը մասնակցեցին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը և ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Քիմիկոսները նախարար Արայիկ Հարությունյանին և Ռադիկ Մարտիրոսյանին ներկայացրին մեր սարքի ընծեռած հնարավորությունները գիտական ուսումնասիրությունների կատարման գործում: Այն թույլ կտա քիմիական գիտությունը Հայաստանում բարձրացնել մեր մակարդակի, և մեր գիտնականները հնարավորություն կստանան արդի սարքավորման միջոցով գիտական ուսումնասիրություններ իրականացնելու և իրենց հետազոտությունների արդյունքները գիտական հոդվածների միջոցով ներկայացնելու միջազգային գիտական հանրությանը, ինչը մինչ այս անհնար էր սարքավորումների ավելի թույլ հնարավորությունների պատճառով:

«Այն նախատեսված է սինթեզվող մյու-



թի ուսումնասիրման և բացահայտման համար: Այս համակարգի օգնությամբ Հայաստանում կզարգանան մյուսաբանության մեր ուղղությունները», - ասաց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը:

Նախարար Արայիկ Հարությունյանը հետաքրքրվեց սարքի կիրառական նշանակությամբ:

Ռադիկ Մարտիրոսյանն ասաց. «Այսօր շուկան այնպիսին է, որ պետք է անընդ-

հատ մեր դեղամիջոցներ ստեղծվեն: Նոր դեղը նշանակում է մեր մյուս, մեր մյուսի կառուցվածք մեր ատոմներով: Այդ ատոմները ճանաչողն այս սարքն է: Ամբողջությամբ սա հնարավորություն է տալիս մյուսի կառուցվածքը որոշել»:

Նշվեց, որ սարքի կիրառական նշանակությունը մեծ է դեղերի սերտիֆիկացման, կոմպակտ և զինու սերտիֆիկացման գործում:

700 հազար դոլար արժողությամբ մի-

ջուկային մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրը ՀՀ ԳԱԱ-ն ձեռք է բերել պետության կողմից հատկացված գումարներից երկար տարիների ընթացքում տնտեսված միջոցների հաշվին: Այս կապակցությամբ Ռադիկ Մարտիրոսյանը հատուկ շնորհակալություն հայտնեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ ասելով. «Բոլորին միշտ ասել եմ, որ ավելի լավ է մեր գումարները պահենք, հետո զենք մի կարգին սարքավորում, քան թույլ հնարավորությամբ մի փոքր բան: Բայց բախվեցինք մեր ֆինանսական օրենքների արգելքին, որ պետք է տնտեսած գումարը վերադարձնենք պետական բյուջե: Ի պատիվ պարոն Փաշինյանի, նա թույլատրեց, որ տնտեսած այդ գումարներն օգտագործենք այս նպատակի համար»:

Այս սարքից օգտվելու են Հայաստանի 18-ից ավելի գիտատեխնիկական կազմակերպությունները, ՀՀ ԳԱԱ համակարգի և բուհերի համապատասխան լաբորատորիաների աշխատակիցները, երիտասարդ գիտնականները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն



Երբ պաշտոնյան սեփական հավակնությունները վեր է դասում գիտության շահերից

ՀՀ ԳԱԱ Նախագահության պատասխանը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի՝ www.hetq.am ինտերնետային թերթում 20.06.2019 թ. հրապարակված «Տարեց գիտնականներին չեն ստիպում, բայց խրախուսում են կենսաթոշակի գնալ» վերնագրով հարցազրույցի վերաբերյալ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (ԿԳՄՍՆ) գիտության կոմիտեի (ԳԿ) նախագահ Սամվել Հարությունյանը www.hetq.am ինտերնետային թերթում 20.06.2019 թ. հրապարակված «Տարեց գիտնականներին չեն ստիպում, բայց խրախուսում են կենսաթոշակի գնալ» վերնագրով հարցազրույցում իր կարծիքն է հայտնում «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի վերաբերյալ, որի կապակցությամբ ԳԱԱ նախագահությունն իր վրդովմունքն է արտահայտում և ներկայացնում որոշ նկատառումներ:

Նախ՝ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի նախագծի մշակումը և քննարկումները սկսվել էին դեռևս 2009 թ., և 2010 թ. աշնանն այն ամբողջական տեսքով պատրաստ էր: ՀՀ գործող ընթացակարգով բոլոր շահագրգիռ գերատեսչությունների և կազմակերպությունների, այդ թվում՝ ԿԳՆ գիտության կոմիտեի դրական կարծիքներով 2011 թ. ապրիլին «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից: Հարկ ենք համարում նշել, որ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի դրույթները համահունչ են ՀՀ բոլոր օրենքների, այդ թվում՝ 2000 թ. ընդունված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի դրույթներին:

Ինչ վերաբերում է հոդվածում նշված «ԳԿ նախագահն ասում է, որ դեռ 2011-ին քննարկման էր դրվել «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագիծը, սակայն հետո ինչ-ինչ պատճառներով այն մի կողմ էր դրվել, ու փոխարենը նույն տարում ընդունվել էր «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը» պարբերությանը, ապա դա, մեղմ ասած, իրականությանը չի համապատասխանում: ԳԿ-ի կողմից մշակված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագիծը քննարկման էր ներկայացվել այն ժամանակ, երբ արդեն «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված էր և ՀՀ նախագահի կողմից ստորագրված էր: Նշենք նաև, որ ԳԿ-ն «Գիտական և գիտատեխ-

նիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագիծը ՀՀ շահագրգիռ գերատեսչություններին և կազմակերպություններին, այդ թվում՝ ԳԱԱ-ին քննարկման էր տրամադրել 2012 թ., որի վերաբերյալ սահմանված ձևաչափով կարծիքները ներկայացվել են 2012 թ. մայիս-հունիս ամիսներին: Ավելին, ԳԿ-ն, ներկայացված առարկություններն և առաջարկությունները հաշվի առնելով, «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագիծն ամբողջական տեսքով հանրային քննարկման նպատակով հրապարակել է 2012 թ. սեպտեմբերի 6-ին «Հայաստանի Հանրապետություն» (թիվ 160) թերթում: Այն, որ ԳԿ նախագահը չի հիշում ԳԿ-ի կողմից մշակված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» օրենքի նոր նախագծի չընդունման պատճառները, ապա անհրաժեշտ ենք համարում հիշեցնել նրան, որ հիմնական պատճառը եղել են օրենքի նոր նախագծի վերաբերյալ 13 նախարարություններից, կառավարության աշխատակազմից, վարչապետի խորհրդակցանից և բազմաթիվ կազմակերպություններից ներկայացված 100-ից ավելի դիտողությունները և առաջարկությունները:

Այն, որ Սամվել Հարությունյանը հոդվածում նշում է. «Ակադեմիայի մասին օրենքը բավականին անորակ է, կառույցին վերագրված են այնքան լիազորություններ, որ միաժամանակ չունեն անգամ 7 նախարարություն», զարմանք է հարուցում: Հարկ ենք համարում հիշեցնել ԳԿ նախագահին, որ ՀՀ նախարարությունները մշակում և իրականացնում են «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված գործունեության ոլորտներում ՀՀ կառավարության քաղաքականությունը, մինչդեռ, համաձայն «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի, ԳԱԱ-ն կազմակերպում, իրականացնում և համակարգում է հիմնարար և կիրառական հետազոտությունները: Ավելին, ԳԱԱ-ն չունի որևէ ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության մշակման և իրականացման լիազորություններ: Հետևաբար, Սամվել Հարությունյանի ասածը, որ ԳԱԱ-ին «վերագրված են այնքան լիազորություններ, որ միաժամանակ չունեն անգամ 7 նախարարություն», հանրությանը մո-

լորեցնելու նպատակ ունի: Ավելորդ չէ նշել, որ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի նախագիծը ժամանակին մանրամասն փորձաքննություն է անցել նաև ՀՀ արդարադատության նախարարության մասնագետների և ՀՀ ճանաչված իրավաբանների կողմից: Անհրաժեշտ ենք համարում նաև փաստել այն, որ 2011 թ.-ից սկսած՝ «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքը ՀՀ գործող օրենքներին համահունչ նպաստել է ԳԱԱ համակարգի ամբողջական և բնականոն գործունեությանը:

Հարցազրույցում Սամվել Հարությունյանը ասում է. «...քեզ անձամբ պնդում էր, որ չեղարկեն ակադեմիայի մասին օրենքը, ...» և նշում է, որ 2016-ին կարծես հաջողվել էր համոզել նախկին վարչապետ Կարեն Կարապետյանին իրականացնել իրենց առաջարկը: Նրա այսպիսի վերաբերմունքը և նմանատիպ անհիմն հայտարարությունները վնասում են ոչ միայն ԳԱԱ-ում, այլ նաև ՀՀ-ում գիտության զարգացմանը և առնվազն հարկի չէ ՀՀ գիտության ոլորտի պատասխանատվին՝ ԳԿ նախագահին: ԳԿ նախագահը կարող էր ՀՀ կառավարության 2017 թվականի գործունեության միջոցառումների ծրագրով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծի հիմնավորման բաժնում հստակ շարադրել «ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի մասին» օրենքի վերաբերյալ իր այդ տեսակետը, որը այն ժամանակ չի եղել: Այս ամենը փաստում են ԳԿ նախագահի սեփական ամբիգիաների վեր դասելը գիտության շահերից և հետին ամսաթվով դրանց անհիմն դրսևորումները:

Հարկ ենք համարում նաև նշել, որ ինչպես 2012 թ., այնպես էլ 2017 թ. ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերով նախատեսված և ԳԿ-ի կողմից ներկայացված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծերի վերաբերյալ բազմաթիվ դիտողությունների և բացասական կարծիքների պատճառով այդ նախագծերը հետագա ընթացք չեն ստացել:

**ՀՀ ԳԱԱ նախագահություն
03.07.2019 թ.**



Երիտասարդ քիմիկոս Սոֆիյա Այդինյանը դարձել է Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ «Oganesson» (Օգանեսոն) տարրի մրցանակակիր

Այս տարի աշխարհը նշում է Մենդելեևի պարբերական աղյուսակի 150-ամյակը: Այս կապակցությամբ IUPAC-ը և Երիտասարդ քիմիկոսների միջազգային ցանցը (IYCN) անցկացրին մրցույթ ամբողջ աշխարհի երիտասարդ քիմիկոսների շրջանում: Հաջող ճանաչված 118 երիտասարդ քիմիկոսները, ուն աշխատանքները ներառում է IUPAC- ի առաքելությունն ու հիմնական արժեքները, դարձան Մենդելեևի պարբերական աղյուսակի 118 տարրերի ներկայացուցիչ: Այսպիսով, ստեղծվել է Երիտասարդ քիմիկոսների պարբերական աղյուսակը (<https://iupac.org/100/pt-of-chemist/>):

Մենդելեևի աղյուսակի 118-րդ տարրը ստացել է «օգանեսոն» (Og) անունը՝ ի պատիվ տարրը հայտնաբերողի՝ ՌԴ Դուբնայի միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի Ֆլորովի անվան միջուկային ռեակտորների լաբորատորիայի գիտական ղեկավար, ՌԴ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ Յուրի Օգանեսյանի:

Սոֆիյա Այդինյանի հետազոտությունները ներառում են նյութաբանության ոլորտը, մասնավորապես կեղծ համաձուլվածքների, կենսահամատեղելի միա-

ցությունների, դժվարահալ անօրգանական միացությունների և այլ մանուկառուցվածքների նյութերի ստացումը բարձրջերմաստիճանային ինքնատարածվող սինթեզի՝ ԲԻՍ (այրման սինթեզի) եղանակով: Գիտական հետազոտություններից են կենսավերարտադրական համակարգերի մոդելավորումը և ստացումը ԲԻՍ եղանակով ադիտիվային տեխնոլոգիաների համար, ինչպես նաև կենսազագից ջրածնի ստացման ելքը մեծացնելու համար կայուն, արդյունավետ և մատչելի կատալիզատորների ստացումը լուծույթների այրմամբ սինթեզի եղանակով: Ներկայումս նա նաև զբաղվում է ադիտիվային տեխնոլոգիաների համար անհրաժեշտ կառուցվածքով բարձրջերմաստիճանային նյութերի սինթեզով: Սոֆիյա Այդինյանն առաջարկել է այրման ռեժիմում գերաճող և թեթև, մանուկառուցվածքով կերամիկական նյութերի ստացման նոր եղանակ 3D տպագրության համար, որոնք հեռանկարային են համարվում տիեզերաշինության համար:

https://www.youtube.com/watch?time_continue=30&v=hSUTSrbGKul
ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ Արամ Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտի գիտաշխատող, քիմիական գիտությունների թեկնածու Սոֆիյա Այդինյանը դարձել է Մենդելեևի պարբերական աղյուսակի 118-րդ «Oganesson» (Օգանեսոն) տարրի մրցանակակիր: Մրցանակաբաշխությունը տեղի ունեցավ սույն թվականի հուլիսի 8-ին՝ Փարիզում՝ Մաքուր և կիրառական քիմիայի միջազգային միության (IUPAC) Գլխավոր ասամբլեայի 50-րդ և IUPAC-ի 47-րդ Համաշխարհային քիմիական կոնգրեսի միատեղ:

Գիտական հանրությունը նշեց հանրահայտ բուսաբան էլեոնորա Գաբրիելյանի 90-ամյա հոբելյանը



ՀՀ ԳԱԱ նախագահության անդամները հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում շնորհավորեցին հանրահայտ բուսաբան, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Արմեն Թախտաջյանի անվան ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի գիտական խորհրդատու էլեոնորա Գաբրիելյանին 90-ամյա հոբելյանի կապակցությամբ:

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը մաղթեց էլեոնորա Գաբրիելյանին քաջառողջություն և հետագա արգասաբեր աշխատանք:

Էլեոնորա Գաբրիելյանին ուղղված ՀՀ ԳԱԱ նախագահության հասցեում նշված է.

Հարգարժան էլեոնորա Ցոլակի

«Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Նախագահությունը և բնական գիտությունների բաժանմունքը ջերմորեն շնորհավորում են Ձեզ ծննդյան 90-ամյա հոբելյանի և գիտական, գիտա-

կազմակերպական, մանկավարժական ու հասարակական 65-ամյա արգասաբեր գործունեության կապակցությամբ:

Դուք անցել եք մեծավաստակ գիտնականին, մանկավարժին և ճշմարիտ հայրենասերին վայել արգասաբեր ուղի, Ձեր գործունեության բոլոր ասպարեզներում, հաղթահարելով դժվարությունները, նվաճել եք մեծ բարձունքներ:

Որպես գիտական հետազոտությունների ոլորտ ընտրելով Համաշխարհային ֆլորայի կենսակարգաբանական և ֆլորիստիկ ուսումնասիրությունները՝ անցած գիտական գործունեության ընթացքում հասել եք կենսաբանական գիտությունների դոկտորի և պրոֆեսորի գիտական բարձրագույն կոչումների՝ հեղինակելով ավելի քան 200 գիտական աշխատություն, այդ թվում՝ 30 մենագրություն: 1978 թվականին տպագրված և լայն ճանաչում ունեցած «Sorbus L. ցեղը Արևմտյան Ասիայում և Հիմալայներում» մենագրության համար Դուք 1984 թվականին արժանացաք ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Վ. Կոմարովի անվան պատվավոր մրցանակի: Ձեր նախաձեռնությամբ և ակտիվ մասնակցությամբ իրականացվել են «Հայաստանի ֆլորայի» բազմահատորյակի, «Հայաստանի Կարմիր Գրքի» և այլ մենագրությունների հրատարակությունները:

Անգնահատելի է Ձեր ակտիվ գործունեությունը՝ կապված Հայաստանի բուսական աշխարհի պահպանության հետ, Ձեր մասնակցությունը «Խոսքով», «Շիկահող», «Երեքունի» արգելոցների և արգելավայրերի ստեղծման և պահպանության աշխատանքներին: Ինքնատիպ գիտական զեկուցումներով հանդես եք եկել աշխարհի տասնյակ առաջատար գիտակրթական հաստատություններում, միջազգային գիտաժողովներում:

Գիտության փորձառու կազմակերպիչ Ձեր ունակություններն առավել ընդգրկում և մասշտաբային դրսևոր-

վեցին հատկապես 1989 թվականից, երբ Դուք ստանձնեցիք ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի բույսերի կարգաբանության և աշխարհագրության բաժնի վարիչի պատասխանատու պաշտոնը: Անգնահատելի է Ձեր ավանդը նաև բարձրորակ գիտական կադրերի (գիտության 2 դոկտոր և 19 թեկնածու) պատրաստման գործում:

1967 թվականից Դուք հանդիսանում եք բույսերի տաքսոնոմիայի միջազգային ընկերության Իսկական անդամ, 1974 թ.-ից՝ Միջերկրյածովյան շրջանի ֆիտոտաքսոնոմիական ուսումնասիրությունների միջազգային կազմակերպության անդամ (OPTIMA), իսկ 1989 թ.-ից՝ Միջերկրյածովյան բույսերի ցուցակի Միջազգային նախագծի խորհրդական (Med-Chicklist):

Ձեր արգասաբեր գիտական գործունեության համար Դուք արժանացել եք տարբեր մրցանակների և պարգևների. 2001 թ.-ին՝ Միջերկրյածովյան Հերբարիումի ֆոնդի պատվավոր արժաթե մեդալ («Պալերմո»), 2003 թ.-ին՝ «Հայաստանի ֆլորայի» 10-րդ հատորի յուրահատուկ գիտական աշխատանքի նախապատրաստման և հրատարակության համար՝ Պատվավոր Պատվոգիր (Ռուսաստան), իսկ 2009 թ.-ին Ձեզ շնորհվել է «ՀՀ գիտության վաստակավոր գործչի» պատվավոր կոչում:

Մենք Ձեզ ճանաչում ենք որպես համարձակ ու սկզբունքային դիրքորոշում ունեցող վաստակաշատ գիտնական:

Այս հիշարժան հոբելյանի առթիվ մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և աշխատանքային անսպառ եռանդ, ստեղծագործական նոր հաջողություններ ու ձեռքբերումներ:

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

Ռ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ բնական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար

ՀՀ ԳԱԱ-ում կայացավ «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում» միջազգային երկրորդ գիտաժողովը

Սույն թվականի հուլիսի 9-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի (ԳԱԱ) նախագահությունում մեկնարկեց «Հայաստանի հնագիտությունը տարածաշրջանային համատեքստում» միջազգային երկրորդ գիտաժողովը՝ նվիրված ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 60-ամյակին: Գիտաժողովին մասնակցում են գիտնականներ ԱՄՆ-ից, Մեծ Բրիտանիայից, Ֆրանսիայից, Լեհաստանից, Իտալիայից, Ռուսաստանից, Վրաստանից:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Արժևորելով ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի անցած ուղին, գիտական ձեռքբերումները՝ ՀՀ ԳԱԱ նախագահը մասնավորապես ասաց. «ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բոլոր սերունդները հավատարիմ են եղել այն գաղափարին, որ հայագիտության զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը հնագիտությունն է: Այդ առումով մենք մեր երախտագիտության խոսքն ենք ասում այն կազմակերպիչներին, ովքեր կանգնած են եղել ինստիտուտի ստեղծման և նրա գործունեության ապահովման ակունքներում:

Համոզված եմ, որ այս գիտաժողովը կլինի շատ հետաքրքիր, և կքննարկվեն այն հարցերը, թե հիմա ինչ ուղղություններով պետք է զարգանա հնագիտությունն այս տարածաշրջանում, որովհետև հնագիտությունն ունի ոչ միայն գիտական, այլև մշակութային և քաղաքական նշանակություն»:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի անունից ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Նարինե Խաչատուրյանը շնորհավորեց ՀՀ ԳԱԱ հնա-



գիտության և ազգագրության ինստիտուտին 60-ամյա հոբելյանի առթիվ և մաղթեց գիտական նորանոր ձեռքբերումներ և նվաճումներ: Իր ելույթում Նարինե Խաչատուրյանը հնազետներին բնութագրեց որպես ժամանակները միմյանց կապող, տրամաբանական շղթան վերստեղծող մարդիկ: «Մարդկության մշակութային պատմությունը սկսվում է հնազետներից և ազգագրագետներից: Ձեր ուժն անխոցելի փաստերն են: Ձեզ մաղթում եմ բեղմնավոր աշխատանք և վստահ եմ, որ մեր համագործակցությունը շատ խորը արժանատի կգցի», - ասաց Նարինե Խաչատուրյանը:

«Հնագիտության և ազգագրության ինստիտուտը 60 տարիների ընթացքում հսկայական ճանապարհ է անցել, և կարելի է ինստիտուտի հրապարակումների, նաև միջազգային կապերի հիման վրա պնդել, որ այն այսօր ընթանում է

համաշխարհային հնագիտության հետ համընթաց: Ինստիտուտի ուսումնասիրությունների արդյունքներով բավական հարստացել է հայոց պատմության հնագիտական հենքը, և այսօր բազմաթիվ տեսություններ, հատկապես պատմագիտության ասպարեզում մեր ժողովրդի ծագման, պետական կառավարման համակարգերի սկզբնավորման բազմաթիվ խնդիրներ, լուսաբանվում են նորովի Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից ստացված նոր արդյունքների շնորհիվ», - իր ելույթում մասնավորապես ասաց ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը:


Քորնելի համալսարանի պրոֆեսոր Ադամ Սմիթն ընդգծեց, որ այսօր Հայաստանը դարձել է հնագիտական հետազոտությունների անցկացման ցանկալի վայր շնորհիվ Հնագիտության և ազգագ-

րության ինստիտուտի աշխատանքների: Ինստիտուտի հետ ունեցած 30-ամյա համագործակցության ժամանակահատվածի համար պրոֆեսոր Ադամ Սմիթն առանձնացրեց 3 կարևորագույն ձեռքբերում. «Առաջին ձեռքբերումն այն է, որ համագործակցության շնորհիվ կուտակվեցին մեծ քանակով տվյալներ, որոնք հասանելի դարձան համաշխարհային հնագիտական համայնքի համար: Այս իմաստով չափազանց կարևոր է «Արամազոր» հանդեսի դերը, որը խոսափող հանդիսացավ հայկական հնագիտությունը աշխարհին՝ ներկայացնելու համար: Երկրորդ կարևոր ձեռքբերումն այն է, որ ինստիտուտը հնարավորություն ունեցավ ներգրավվելու միջազգային հետազոտական ծրագրերում, իսկ երրորդը՝ ինստիտուտի մեծ աշխատանքն է հնազետների նոր սերունդ դաստիարակելու գործում»:

Վինչեսթերի համալսարանի պրոֆեսոր Քեյթ Վիլքինսոնն էլ իր ելույթում նշեց. «Դուք բախտավոր եք ձեր հնագիտական ժառանգությամբ: Ես կցանկանայի շնորհակալություն հայտնել համագործակցության համար: Հուսով եմ, որ մեր համագործակցությունը կշարունակվի, և նոր հայտնագործություններ կունենանք»:

Եռօրյա գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջազգային համատեղ ծրագրերով կատարված հետազոտությունների, մասնավորապես հայ-ամերիկյան, հայ-իտալական, հայ-ճապոնական, հայ-ֆրանսիական, հայ-ավստրիական, հայ-գերմանական համատեղ արշավախմբերի հետազոտությունների արդյունքները:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն
09.07.2019 թ.



2019 թ. հունիսի 20-22-ին Երևանում կայացավ «Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը ԻԱ դարակգրի Յայաստանում» խորագրով միջազգային գիտաժողովը, որը նվիրված էր ակադեմիկոս հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի (1928-1988) ծննդյան 90-ամյակին:

Գիտաժողովի հրավիրման նախաձեռնությունը պատկանում էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտություն և պատմագրություն բաժնին, որը 1980-ական թթ. հիմնադրել է Արամ Տեր-Ղևոնդյանը: Գիտաժողովի համակարգման ամբողջ պատասխանատվությունը իրենց վրա էին վերցրել բաժնի աշխատակիցները, որոնց նախապատրաստական աշխատանքների ընթացքում մեծ օգնություն են ցույց տվել Արևելագիտության ինստիտուտի տնօրինությունը և գրեթե բոլոր բաժինների աշխատակիցները: Գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին ներգրավվել և իրենց մասնակցությունն են բերել ՀՀ ԳԱԱ նախագահությունը, Երևանի պետական համալսարանը, մասնավորապես արևելագիտության և բանասիրության ֆակուլտետները, ինչպես նաև Մաշտոցի անվան «Մատենադարան» հին ծեռագրերի ինստիտուտը: Կոմիտասի կազմկոմիտեն ղեկավարում էր ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արևելյան աղբյուրագիտություն և պատմագրություն բաժնի վարիչ Ա. Բոգոյանը:

Գիտաժողովը, որն ընթացել է Մատենադարանի դահլիճում և գիտությունների ազգային ակադեմիայի կլոր հանդիսասրահում, մեծ արձագանք է գտել ինչպես Յայաստանի Հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Դրա մասին է վկայում հասարակագիտական գիտությունների հատկապես մի շարք առաջատար միջնադարագետ մասնագետների մասնակցությունը գիտաժողովին: Գիտաժողովի հայագրի և արտերկրի մասնակիցները (վերջիններս ժամանել էին ԱՄՆ-ից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Իսրայելից, Վրաստանից, Հունաստանից, Իտալիայից, Ռուսաստանի Դաշնությունից), ներկայացնելով իրենց բարձրակարգ գիտական հաստատությունները, նոր հնարավորություն էին ստացել ներկայացնելու իրենց

Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը ԻԱ դարակգրի Հայաստանում

պրատունները հայաստանյան լսարանին, մտքերի փոխանակությամբ և գիտական հետազոտականության ընդլայնմամբ՝ շարունակելով մի շարք բարդ խնդիրների վերլուծությունը: Գիտաժողովին մասնակցած գեկուցողների թիվը գերազանցում էր 30-ը:

Հանդիսավոր միստի բացումից հետո, որը ղեկավարում էր գիտությունների ազգային ակադեմիայի հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը, արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռուբեն Սաֆրասյանը (ԱԻ), Մատենադարանի տնօրեն, դոկտոր Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ղեկան, պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանը, Միչիգանի ԱՆՆ Արբրը համալսարանի պրոֆեսոր Պարո Բարդախյանը կարևորեցին նման գիտաժողովների նշանակությունը հայագիտության զարգացման գործում, որը հնարավորություն է ընձեռում բացարձակապես նոր դիտանկյունից լուսաբանելու միջնադարագիտության և արևելյան բանասիրության հատկապես դեռևս քննարկման չարժանացած խնդիրները, մասնագիտական հիմք ստեղծելու մեթոդական և գիտական հետազոտությունների բազմակողմանի հետազոտության համար: Բանախոսները խորհրդանշական համարեցին գիտաժողովում քննարկվելիք հիմնահարցերը ներկայացնել հենց Արամ Տեր-Ղևոնդյանին նվիրված գիտաժողովին, քանի որ անուրանալի են վերջինիս ծառայությունները Յայաստանում արևելյան աղբյուրագիտություն գիտաճյուղի զարգացման գործում: Հանդիսավոր միստի վերջում ցուցադրվեց Արամ Տեր-Ղևոնդյանի գործունեությանը նվիրված վավերագրական ֆիլմ:

Գիտաժողովի առաջին միստի գեկուցողները հիմնականում անդրադարձ էին կատարում Արամ Տեր-Ղևոնդյանի աշխատանքներին, որոնք նվիրված են Բագրատունյաց դարաշրջանի պատմության խնդիրներին, նոր փաստերով ու վերլուծություններով հարստացնելով գիտության այդ բնագավառը:

Ալեքսան Զակոբեանի (ԱԻ) և Իզոր Դորֆման Լազարևի նախագահությամբ շարունակվեցին գիտաժողովի աշխատանքները, որոնք ազդարարում էին երկրորդ միստի մեկնարկը, որը վերաբերում էր հայկական և մերձավորարևելյան աղբյուրագիտության մի շարք հիմնախնդիրների:

Օրվա վերջին միստը, որը ղեկավարում էին Վահան Տեր-Ղևոնդյանը և Ազատ Բոգոյանը, ամբողջովին նվիրված էր Կիլիկիայի հայոց թագավորության և նրա սկզբնաղբյուրների հետազոտման խնդիրներին:

Երկրորդ օրվա միստը ՀՀ ԳԱԱ կլոր հանդիսասրահում

էր, որտեղ Արամ Տեր-Ղևոնդյանի հիշատակին նվիրված հարգանքի խոսքով հանդես եկան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Հովհաննիսյանը (ԱԻ) և ՌԳԱ արևելյան ծեռագրերի ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Իրինա Պոպովան, որոնք ընդգծեցին Արամ Տեր-Ղևոնդյանի գիտական գործունեության շարունակական կապը պետերբուրգյան արևելագիտական դպրոցի դասական ավանդների հետ, աշակերտելով Հովսեփ Օրբելուն: Պրոֆեսոր Հովհաննիսյանը վերաարժևորեց Արամ Տեր-Ղևոնդյանի գիտական ժառանգությունը, նրա հմտությունները և այն եռանդը, որով նա տոգորված էր իր հետազոտությունների ստեղծման ընթացքում:

Չորրորդ միստը ամբողջովին նվիրված էր վերջին տարիներին արևելյան աղբյուրագիտության բնագավառում ԵՊՀ-ում և Մատենադարանում կատարված աշխատանքներին:

Հինգերորդ միստում տեսական և աղբյուրագիտական քննություններով հանդես եկան թուրքագետներ Ռուբեն Սաֆրասյանը (ԱԻ), Անուշ Հովհաննիսյանը, աղբյուրագետներ Գեորգի Միրզաբեկյանը և Քրիստինե Կոստիկյանը:

Վերջին միստի առաջին երկու գեկուցումները նվիրված էին հայկական սկզբնաղբյուրներին (Ալեքսան Զակոբեանը, (ԱԻ) գեկուցեց «Հայոց դարձի մանրամասներն ըստ Գրիգոր Լուսավորչի «Վարքի» արաբերեն տարբերակի» հաղորդումը, ծանրանալով բանավեճի վրա քրիստոնեության ընդունման թվականին վերաբերող, իսկ Արթուր Մաթևոսյանը անդրադարձավ «Սուրբ Երրորդության դավանանքը Սուրբ Գրիգոր Տաթևացու Ոսկեփորիկում» թեմային: Գիտաժողովի վերջին «Դվինի պեղումներից գտնված արաբատառ արձանագրությունները» գեկուցումն ընթերցեց Տիգրան Միքայելյանը:

Հատկանշական է, որ երկրորդ օրն ամփոփվեց «Արևելյան աղբյուրագիտություն» թվային գրադարանի բացմամբ, որն, անշուշտ, կարևոր իրադարձություն էր հայագիտական և արևելագիտական հետազոտությունների հետազոտ ընթացքի համար:

Գիտաժողովի երրորդ օրը նշանավորվեց շրջագայությամբ, որը կազմակերպվել էր Արագածոտնի մարզ՝ Ամբերդ, Սաղմոսավանք և Հովհաննավանք:

Այսպիսով, Արամ Տեր-Ղևոնդյանի 90-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովը կատարեց իր առջև դրված նպատակները՝ նոր հարթակ տրամադրելով միջնադարագիտությանը զբաղվող ուսումնասիրողների համար, որոնք իրենց նոր խոսքը մատուցեցին:

Գեորգի ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ԳԻՏԱԿԱՆ ՆԱՏԱԺՐՋԱՆ...

➤1 կան արվեստի չի կարող զարգանալ: Երգչախմբային երաժշտության մեջ եթե չլինեին Չեքիջյանի հմտությունները, շատ ստեղծագործություններ չէին ստեղծվի:

Այնուհետև Հովհաննես Չեքիջյանն իր երաժշտագիտությունը հայտնեց՝ այս էլ երկրորդ անգամ նման պատվի արժանանալով՝ իրեն նվիրված ակադեմիական գիտաժողովի կազմակերպման համար:

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Յայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի գիտնականներն ու դասախոսները:

Լիագունար միստում տողերիս հեղինակը ներկայացրեց Հովհաննես Չեքիջյանի ներդրումը հայ երաժշտարվեստում: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Անահիտ Բաղդասարյանը հանդես եկավ «Հոգևոր երաժշտությունը Հովհաննես Չեքիջյանի կատարողական արվեստում» բանախոսությամբ: ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Մարգարիտա Ռուխկյանը ներկայացրեց «Մշակութային ավանդույթների զարգացումը՝ ազգային ինքնության պատվար» թեմայով բանախոսությունը:

Լիագունար միստը եզրափակեց Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորան, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Լուսին

Նե Սահակյանի «Կոմիտասի խմբերգերը չեքիջյանական մեկնաբանությամբ» գեկուցումը:

Այնուհետև գիտական նստաշրջանի միստերը շարունակվեցին Արգականում՝ ՀՀ ԳԱԱ գիտաժողովների տանը:

Առաջին միստում ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր Նազեմիկ Սարգսյանն անդրադարձավ Հովհաննես Չեքիջյանի գործունեությանը Երևանի Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում:

2019 թ. մայիսի 14-ին Ա. Խաչատրյան համերգասրահում Յայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի և Յայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի կատարմամբ, Հովհաննես Չեքիջյանի փայլուն ղեկավարությամբ հնչեց Կառլ Օրֆի «Carmine burana» կանտատը, որի չեքիջյանական մեկնաբանության առանձնահատկությունների մասին էր ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, կոմպոզիտոր և երգեհոնահար Հովհաննես Մանուկյանի գեկուցումը:

55 տարի առաջ՝ 1964-ի նոյեմբերի 24-ին, 25-ին, 26-ին, 27-ին, 28-ին և 29-ին, տեղի ունեցավ Հ. Չեքիջյանի դեբյուտը ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում: Մոսկովյան դեբյուտից անցած 50 տարիների ընթացքում Մոսկվայում Մատենոն ունեցել է 90 համերգ: Չեքիջյանի մոսկովյան հյուրախաղերին էր նվիրված ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու Մարիաննա Տիգրանյանի գեկուցումը, որը եզրափակեց առաջին միստը:

Յայաստանի ազգային ակադեմիական երգչախումբը Մատենոն Հովհաննես Չեքիջյանի ղեկավարությամբ համերգներով շրջագայել է Յայաստանի սահմաններից դուրս 184 քաղաքներում՝ նախկին ԽՍՀՄ հանրապետություններում, Լիբանոնում, Ֆրանսիայում, Իսպանիայում, Չեխոսլովակիայում, Լեհաստանում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Հունաստանում, Սիրիայում, Շվեյցարիայում, Թուրքիայում, Արգենտինայում, Ավստրալիայում... 868 համերգների ընթացքում հանդես է եկել աշխարհի 69 առաջնակարգ նվագախմբերի հետ:

Նստաշրջանի վերջին միստում Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի վարիչի տեղակալ, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի դոկտորանտ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ Աննա Հարությունյանը ներկայացրեց Մատենոնի արտասահմանյան համերգային շրջագայությունների լեհական էջը:

Յայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի տնօրեն, արվեստագիտության թեկնածու Սարգիս Բալբաբյանի գեկուցումը նվիրված էր Հովհաննես Չեքիջյանի և նվագախմբի բեղմնավոր համագործակցությանը:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող, արվեստագիտության թեկնածու, արվեստաբան Մարգարիտա Քանալյանը «Հովհաննես Չեքիջյանը հայ նկարիչների և քանդակագործների աչքերով» գեկուցման մեջ մասնագիտական քննության եմթարկեց նշանավոր հայ նկարիչների՝ Հովհաննես Չեքիջյանի վառ անհատականությունը հավերժացնող ստեղծագործությունները: Բանախոսը ներկայացրեց նաև Մատենոնի տաղանդով հիացած անվանի կերպարվեստա-

գետներ Երվանդ Քոչարի, Մարտիրոս Սարյանի, Հակոբ Հակոբյանի, Գրիգոր Խանջյանի բարձր գնահատանքի խոսքերը:

Նստաշրջանը եզրափակեց Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հայցորդ Նաիրա Մադոյանը իր «Հովհաննես Չեքիջյանի և հայկական կապելլայի լեհիմոգրադյան հյուրախաղերը. Լեհիմոգրադյան Մատենոնի առաջին հյուրախաղերի 55-ամյակի առթիվ» գեկուցմամբ: 1964-ի նոյեմբերի 1-ին կապելլան Հ. Չեքիջյանի ղեկավարությամբ նվաճեց Լեհիմոգրադը: 1964-ին սկիզբ առած բարեկամությունը Լեհիմոգրադի ունկնդրի հետ շարունակվեց հետագայում. Մատենոն Չեքիջյանի ղեկավարությամբ երգչախումբը 97 համերգ է ունեցել Լեհիմոգրադում: Բանախոսն անդրադարձավ լեհիմոգրադյան այն համերգներին, որոնցում Մատենոն Չեքիջյանն ու նրա ղեկավարած կապելլան իրականացրել են տարբեր ստեղծագործությունների համամիութենական պրեմիերաները:

Վերջում տողերիս հեղինակն ամփոփեց նստաշրջանի արդյունքները, որից հետո Մատենոն մատուցեց իր անակնկալը. գիտական նստաշրջանի ունկնդիր՝ կապելլայի արտիստների փոքրաթիվ խմբի կատարմամբ հնչեց Մակար Եկմալյանի «Ով, հայոց աշխարհ» ակապելլա խմբերգը, որից հետո իր երաժշտագիտության խոսքն ասաց Մատենոն:

Առաջիկայում լույս կտեսնի նստաշրջանի գեկուցումների ժողովածուն:

ԱՆՆԱ ԱՍՏՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրենի տեղակալ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր

(Սկիզբը՝ № 6-ում)

Դեռևս Առաջին համաշխարհային պատերազմի օրերին՝ 1916 թ., դաշնակից տերությունների՝ Անգլիայի և Ֆրանսիայի ներքին պայմանավորվածությամբ (Սայքս-Պիկո) Թուրքիայի պարտության դեպքում 2.600.000 հեկտար մշակովի, բերքառատ հողեր ունեցող Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիայի հսկողությանը։ Անգլիայի և Ֆրանսիայի իշխանությունները Փարիզի Ազգային պատվիրակության հետ նախապես համաձայնվել էին, որ եթե հայ կամավորները կռվեն գերմանա-թուրքական զորքերի դեմ, հաղթանակից հետո հայերին կտրվեն քաղաքական լայն հնարավորություններ, և Հայկական Կիլիկիան կդառնա ինքնավար։

Ուստի, թուրքական բանակից, աքսորի ճամփաներից ու տարբեր վայրերից, նույնիսկ հեռավոր Ամերիկայից ժամանած հայ երիտասարդները, իրենց միլիոնավոր անմեղ նահատակ հարազատների վրեժով լցված, արհամարհելով մահը, պարտության են մատնում թուրք-գերմանական զորքերին՝ նվաճելով Արարայի փայլուն հաղթանակը Նաբլուսի՝ Պաղեստինի մոտ։ Հայ քաջարի լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական և բրիտանական հրամանատարության դրվաճանքին։ Գեներալ Ալենքիմ 1918 թ. հոկտեմբեր-



Այնթապի ինքնապաշտպանության գլխավոր երեք ղեկավարները՝ Ներսէս Ա. Քրէյ, Թաուգենակ, Ասուր Լեւոնեան եւ Աւետիս Գալեմբեարեան։

են պաշտպանական 4 շրջանների, փորում են խրամատներ, մարտական տրամադրությունը համակում է բոլորին։ Թշնամին նորանոր թնդանոթներով ու անհամար կանոնավոր զորքով համալրում է իր ուժերը։ Ութամյա երկարատև ու համառ դիմադրությունից հետո թուրքերին հաջողվում է հրետանու խաչածև կրակոցների հեղեղով ավերել ու իրկիզել նաև Հաճընի քաղաքը։ Հաջորդում է Պարյուրավոր քաջարի մարտիկներ ընկ-


Հայաստանի Առաջին հանրապետություն (1918-1920 թթ.), Խորհրդային Հայաստանի Հանրապետություն (1920-1991 թթ.), ապա 1991 թվականից՝ որպես անկախ Հայաստանի Հանրապետություն, սակայն հայ ժողովրդի մեծագույն մասը մնաց ցրված աշխարհի տարբեր երկրներում։ Եվ ստեղծվեց Հայ սփյուռքը՝ որպես պատմական իրողություն։

Այսպիսով, թեպետ երիտթուրք կառավարությունը Հայոց ցեղասպանության ընթացքում (1915-1923 թթ.) դաժանորեն ճնշում էր կայսրության տարբեր վայրերում ծայր առած արևմտահայերի դիմադրողական-ինքնապաշտպանական գոյամարտերը, սակայն իրենց ապրելու մարդկային տարրական իրավունքի և ազգի ֆիզիկական գոյության համար մարտնչող անձնուրաց հայ հերոսները փայլուն հետք թողեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ որոնց մասին վկայել են նաև ականատես-վերապրողները։

Ի մի բերելով Հայոց ցեղասպանության ընթացքում արևմտահայոց դիմադրողական, ինքնապաշտպանական երկու տասնյակից ավելի գոյամարտերը՝ կարելի է համգել մի շարք կարևոր եզրակացությունների, որոնք բացառում են հայ ժողովրդի «ոչխարի պես» գոհ-

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՑ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԳՈՅԱՄԱՐՏԵՐԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1915-1923 թթ.)

ԸՍՏ ԱԿԱՆԱՏԵՍ-ՎԵՐԱՊՐՈՂՆԵՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ



րի 12-ին Փարիզի Ազգային պատվիրակության նախագահ Պոլոս Նուբարին հղած հեռագրում գրել է. «Ես հպարտ եմ իմ հրամանատարութեան տակ հայկական զորամաս ունենալուս համար։ Նրանք կռուեցան փայլուն կերպով, եւ մեծ բաժին մը ունեցան յաղթանակի մէջ»։

Զնանաչելով Սևրի պայմանագիրը՝ 1920 թ. հունվարից քենալաթուրքական զորքերը գրոհում են Կիլիկիայի հայկական բնակավայրերը։ 22 օր տևած կատաղի մարտերում Մարաշի հայերը կոտորվում են, իսկ քաղաքը՝ մոխրացվում։ Մարաշի ականատես-վկա Վերգինե Մայիկյանը (ծնվ. 1898 թ.) պատմել է. «...Մեր խաղաղ կյանքը տևեց 1918-1920 թիվը, քանի դեռ ֆրանսիական իշխանությունը Կիլիկիայում էր։ Ֆրանսիական ու հայկական թերթերը միշտ գրում էին, որ Ֆրանսիան հավիտյան Կիլիկիայում կմնա։ ...Օր մըն ալ ելանք, որ ֆրանսիացիները իրենց ձիերուն սմբակներուն տակը քեչն (թաղիք - թուրք.) կապեր են և սուս ու փուս հեռացեր են Մարաշեն» կոտորածի վտանգի մատնելով կիլիկիահայությանը։

1920 թ. ապրիլի 1-ին քենալականները պաշարում են Այնթապը։ Ականատես-վերապրող Սանդուխտ Յեքիմյանը (ծնվ. 1908 թ., Այնթապ) վկայել է. «1920 թ. Ալի Քըլըջն ահռելի զորքով հարձակվեց Այնթապի վրա։ Այնթապի ինքնապաշտպանության ղեկավարն էր Ա. Դուր Լևոնյանը։ Ան այնթապցիներու կերակուրի պղինձներն անգամ հալեցնել տվավ, որ բռնաբաներ չիսնեն։ Ան իր կամավորներով հարձակվեցավ թշնամու վրա և դուրս եկավ պաշարումեն։ Ալի Քըլըջի 24.000-ի հասնող զորքը մեկ գիշերվա մեջ սարսափահար ետ փախավ»։

Այդ ընթացքում Կիլիկիայի գրավման ընդհանուր հրամանատար Գոգան օղլու Դոդան բեյն իր բազմա-հազարանոց զորքով պաշարում է Հաճըն քաղաքը, որի 35.000 հայ բնակիչներից Մեծ եղեռնից փրկվել էին միայն 6.000-ը։ Սակայն հաճընցիները լի էին վճռակա-նությամբ։ Նրանք իրենց կառավարիչ փաստաբան Կարապետ Չալյանի ղեկավարությամբ կազմում են Հաճընի ինքնապաշտպանության բարձրագույն խորհուրդը։ Պաշտպանության հրամանատար են ընտրում զորավար Անդրանիկի զինակից սպա Սարգիս ճեպեճյանին։ Կազմակերպում են 4 վաշտ, 60 հեծյալից բաղկացած էսկադրոն։ Հաճընն ու իր շրջակայքը բաժանում

նում են դիրքերում, հազարավոր հաճընցիներ անխնա կոտորվում են։ Միայն 380 հոգու հաջողվում է կռվելով ճեղքել թշնամու պաշարման շղթան և դուրս գալ ահավոր հրդեհի շրջափակումից։

**«Երեք հարյուր հայ քաջերով,
Բոլոր զինված մոսիմներով,
Դողան բեյին մենք ջարդ տալով,
Հաճըն ինկավ՝ «Վրեժ» գողալով»։**

«Վրեժ» գողալով ընկնում են նաև ընդհատումներով 314 օր հերոսաբար դիմադրած Այնթապը, հինավուրց քաղաքամայր Սիսը, պատմական անցյալ ունեցող Տարսուը, առևտրի կենտրոն Ադանան և հայերով բնակեցված Կիլիկիայի այլևայլ բնակավայրեր։ Անգլիայի իրափանգով ֆրանսիական կառավարությունը, դրժելով իր դաշնակցային պարտավորությունները հայերի նկատմամբ, 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագրով Կիլիկիան հանձնում է թուրքերին՝ կոտորածի վտանգի մատնելով տեղի հայությանը։

Այդ ժամանակ է, որ Հայոց ցեղասպանության միլիոնավոր զոհերի վրեժը լուծեց ազգային հերոս Սողոմոն Թեկլիրյանը՝ Բեռլինում սպանելով փախուստի մեջ գտնվող մեծ ոճրագործ Թալեթ փաշային։ Թեպետ գերմանացի դատավորները ընթերցումով մոտեցան և արդարացիին հայ վրիժառուին սակայն դրանով չբարեկամվեց արևմտահայության վիճակը։

1921 թ. Կիլիկիայի հայության պարպումից հետո, հերթը հասել էր Անատոլիայի հայերին։

1922 թ. քենալականները իրո ճարակ են դարձնում նաև Ջմյուռնիայի հայկական և հունական թաղամասերը՝ քրիստոնյաներին քշելով ծովափ։ Այդ սահմանեցուցիչ իրադարձությունը ժողովրդի հիշողության մեջ մնացել է որպես «Իզմիրի աղետ», քանի որ Քենալ Աթաթուրքը հայտարարել էր՝ «Թուրքիան թուրքիին է»։

Աֆիոնգարահիսարցի վերապրող Արփինե Բարթիկյանը (ծնվ. 1903 թ.) վկայել է. «...Մեյ մըն ալ սկսավ միլիկական (ազգայնական - թուրք.) շարժումը։ Իզմիրը կրակի տվին։ Առաջին կրակը Հայնոց տվին։ Ս. Ստեփանոս եկեղեցին այրեցին։ Քանի որ բոլոր հայերը այդ եկեղեցին մտած էին, որ պաշտպանվեն։ Վերջը հայերս փախանք, գնացինք ծովեզերք։ Ծովին վրա լի՞քը մավակներ էին, բայց թուրքերը մախսորոք բոլոր մավակները ծակել էին, որ ջուրը լցվի ու հայերը չկրնան ազատվիլ։ Խեղճ հայերը մավակ էին նստում, քիչ մը կլողար մավակը, վերջը՝ լը՛կ-լը՛կ, ջուրը կլեցվեր մեջը, բոլորը ծովի մեջ շուռ կուզային։ Ծովի վրա լի՞քը ուռած մարմիններ էին...»։

Ավելին, 1923 թ. Լոզանի պայմանագրով դաշնակից տերությունները ճանաչեցին Մուստաֆա Քենալի Անկարայի կառավարությունը և նրա իրավունքը Արևելյան Թրակիայի, Իզմիրի, Կիլիկիայի նկատմամբ, ինչպես նաև այն բոլոր տարածքների նկատմամբ, որոնք Սևրի հաշտության պայմանագրով պիտի անցնեին Հայաստանին։ Բացի այդ, նրանք ճանաչեցին Թուրքիայի նոր սահմանները, որոնք ընդգրկում էին նաև Արևելյան Հայաստանի մասերն շրջանները՝ Կարսը, Արդահանը, Սուրմալուն (Իզմիր)։ Դա Թուրքիայի հաղթանակն էր, իսկ պատմական Հայաստանի մի փոքրիկ մասը՝ 1/10-ը, շարունակեց գոյություն ունենալ որպես

վելը, ինչպես թվում է ոճանց.

• Առաջին աշխարհամարտի հենց սկզբից (1914 թ.) երիտթուրք կառավարությունը հավաքել էր հայերի զենքերը, ընդհուպ մինչև խոհանոցի դանակները։ Հետևաբար՝ հայերը զինաթափված էին և գոյամարտերի ընթացքում գերմանական զենքերով զինված թուրքական բանակների դեմ կռվում էին ինքնաշեն զենքերով.

• կառավարությունը թուրքական բանակ էր զորակոչել 17-45 տարեկան հայ երիտասարդներին, որոնց, ըստ էնվեր փաշայի գաղտնի հրահանգի, աչքից հեռու վայրերում դաժանորեն ոչնչացրել էին։ Ուստի գոյամարտող տարրը նվազ էր,

• կառավարությունը հավաքագրել և անապատներում ոչնչացրել էր հայ մտավորականներին՝ արևմտահայերին զրկելով ոչ միայն ռազմունակ ուժից, այլև ղեկավար մտքից,

• հայ ժողովուրդը երբեք նախահարձակ չի եղել, սակայն, երբ իր նկատմամբ անարդարություն և բռնություն են կիրառվել, արժանին հատուցել է,

• հայերի գոյամարտերն իրականացվել են միմյանցից անջատ, իրարից կտրված,

• հայերը թշնամու անգեմ բնակչության՝ կանանց, երեխաների և ծերերի հանդեպ՝ միշտ մեծահոգի ու մարդկային են եղել, իսկ թուրքերը՝ ընդհակառակը,

• հայ ժողովուրդն ունեցել է բազմապիսի կորուստներ (մարդկային, նյութական, մշակութային, տարածքային և այլն)։ Նրա նպատակն է եղել ապրել խաղաղ ու ստեղծագործ կյանքով իր հազարամյա բնօրրանում, իսկ թուրքերը զավթել են այլոց տարածքներն ու յուրացրել նրանց մշակույթը,

• հայ ժողովուրդն իր դիմադրողական-ինքնապաշտպանական գոյամարտերի ընթացքում մշտապես եղել է մենակ, անօգնական, հաճախ նաև դավաճանված՝ իր անմնացորդ նվիրվածության դիմաց։ Մեծ տերությունները դիտորդի դերում են եղել և ուշացած սոսկ մարդասիրական ու որբախնամ օգնություն են ցուցաբերել։

Այնինչ, երբ հայ ժողովուրդը միասնաբար բռնեցըվել է, Սարդարապատի հերոսական ճակատամարտով վերականգնել է 600 տարվա իր կորցրած պետականությունը, ապա նաև ազատագրել է բռնազավթված Արցախը, որը մեր ազգային պահանջատիրության ու հաղթական հանգրվանն է... Ուստի, աղոթքախառն տողեր է հղում առ Աստված.

**«Տե՛ր. դուն պահե միշտ անսասան
Դյուցազնական Մայր Հայաստան,
Տուր հարատև խաղաղություն,
Կյանք ու արև, ազատություն.
Հայ դրոշով մեր պետական
Թող միշտ ապրի ազգն հայկական
Ամեն»։**

**Վերջինե ՍՎԱԶԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության
ինստիտուտի առաջատար գիտաշխատող**

Ապացույցն այն բանի, որ Տիգրան Մեծը սկզբունքորեն չէր կարող տեղադրել գիսաստղի խորհրդանիշը իր թագի վրա



Ինչպես հայտնի է, կան Տիգրան Մեծի ժամանակաշրջանին պատկանող մեծ թվով մետաղադրամներ՝ Տիգրան Մեծի պատկերով, ում թագի վրա պատկերված են ութանկյուն աստղը՝ Արևի խորհրդանիշը, իսկ աստղի ձախ և աջ կողմում արժիվներն են։ Դա Մեծ Ռայաստանի դրոշմ է և միաժամանակ Արտաշեսյան դինաստիայի տոհմական զինանշանը։

Վ. Գուրգադյանի և Ռ. Վարդանյանի «Մ.թ.ա. 87 թ. Յալլիի գիսաստղը Ռայո Տիգրան թագավորի մետ... դադրամների վրա» հոդվածում նշված է, որ գոյություն ունեն շատ քիչ քանակությամբ Տիգրան Մեծի պատկերով մետաղադրամներ, որտեղ Տիգրան Մեծի թագի վրա պատկերված է սիմետրիկ ութանկյուն աստղ, որի ճառագայթներից մեկը մյուսներից երկար է մոտ 1.5 անգամ։ Օգտագործելով այս կասկածելի մետաղադրամները և հիմք ընդունելով այն, որ հավանաբար երկրագնդի մոտով Յալլեի գիսաստղի հերթական անցումը տեղի է ունեցել հայոց արքաներից հզորագույնի՝ Տիգրան Մեծի գահակալության օրոք, [1]-ում արվում է ամփոփում, որ Տիգրան Մեծի թագի վրա իբրև թե պատկերված է այս գիսաստղը։ Ներքևում մենք ապացուցում ենք, որ դա ակնհայտ տրամաբանական սխալ եզրակացություն է և անհեթեթություն է, և որ հոդված [1]-ը Ռայաստանին վնաս է հասցնում։

Մեր աշխատանքում ցույց է տրվում, որ Տիգրան Մեծի համար հոգեբանական տեսակետից սկզբունքորեն անընդունելի կլինեի գիսաստղի պատկերն իր թագին պատկերելը՝ մի շարք պատճառներով։ Բանն այն է, որ ամտիկ շրջանում և միջնադարում գիսաստղը միշտ զուգորդվել է չարիքի, աղետի հետ։ Այն համարվում էր սպասվող չարիքի և աղետների նախանշան։ Հետևաբար, Տիգրան Մեծը չէր կարող այդ չարագուշակ չարիքի և աղետի նշանը տեղադրել իր թագի վրա՝ հանելով հզոր Ռայաստանի խորհրդանիշ հանդիսացող արժիվների և ութանկյուն աստղի պատկերները՝ հզոր Ռայաստանի դրոշմ։ Դա կհակասեր և Տիգրան Մեծի՝ որպես գահակալի շահերին, ինչպես նաև հզոր Ռայաստանի գաղափարին։

Դժվար է նաև հավատալ, որ Տիգրան Մեծը փոխարինելու ութանկյուն աստղը՝ Արևի նշանը, սատանայական գիսաստղով՝ չարիքի նշանով։ Նա մի՞թե Արևի

կրոնական խորհրդանիշը՝ հզոր Ռայաստանի պետական խորհրդանիշը, այդ աստիճանի կիսեղաթյուրներ՝ այն միավորելով չարիքի խորհրդանիշ գիսաստղի հետ։ Եվ դա այն դեպքում, երբ սիմետրիկ ութանկյուն աստղը նաև Տիգրան Մեծի տոհմային վաղեմի զինանշանն էր։ Եվ ինչո՞ւ հեռացնել արժիվներին...

Այս ամենը անհասկանալի կլինեի նաև նրա հպատակների, այլ երկրների արքաների և իր ազգականների համար։ Դա կթուլացնեի Տիգրան Մեծի իշխանությունը և հեղինակությունը։

Այսպիսով, նմանօրինակ քաղաքական և կրոնական սխալ Տիգրան Մեծը չէր կարող թույլ տալ։ Այստեղից հետևում է,



որ [1]-ի հիմնական պնդումը ակնհայտորեն կոպիտ սխալ է։

Կարևոր է նշել, որ ժամանակակից աշխարհում նույնպես գիսաստղը առաջացնում է վտանգի զգացում և բացասական վերաբերմունք, համարվում է աղետաբեր երևույթ, քանի որ ժամանակակից գիտությունը ապացուցել է, որ դա մեծ վտանգ է ներկայացնում մեր մոլորակի համար և կարող է ոչնչացնել մարդկային քաղաքակրթությունը։ Մասնավորապես մարդկությունը հիշում է համեմատաբար վերջերս՝ 1994 թ., Յուպիտեր մոլորակին Շումեյկեր-Լեյկի գիսաստղի հասցրած ահռելի հարվածների մասին։ Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ գիտական նախագծեր, որոնք նախատեսում են ոչնչացնել երկրագնդին մոտեցող նման օբյեկտները՝ մեր մոլորակը փրկելու համար։ Հոլիվուդը բազմաթիվ այդպիսի կինոնկարներ է ստեղծել գիսաստղերի վտանգի մասին։ Եվ այս ամենը ամուր մտել է մասսայական գիտակցության մեջ գեղարվեստական ֆիլմերի և հսկայական քանակությամբ գիտահանրամատչելի հոդվածների շնորհիվ։

Եթե համացանցում փնտրում ենք «кометная угроза» արտահայտությունը, ապա կգան հսկայական քանակությամբ հղումներ։ Դա նշանակում է, որ տվյալ աշխատանք [1]-ը, որտեղ վտանգավոր օբյեկտը, որը պետք է ոչնչացնել անհրաժեշտության դեպքում, զուգորդվում է հայոց պետականության խորհրդանիշների հետ, իսկ գիսաստղի նկատմամբ բացասական վերաբերմունքը տեղափոխվում է հայոց պետականությանը։

Այս ամենը նշանակում է, որ այս հոդված [1] -ը մեծ վնաս է հասցնում մեր երկրին։

Իսկապես, ըստ հոգեբանական ներգործության օրինաչա-

փությունների, եթե որևէ օբյեկտի թեկուզ մի մասի վրա պատկերված է բացասական նշանակություն ունեցող խորհրդանիշ, ապա ընկալողի մոտ այդ բացասական տպավորության տիրույթում կհայտնվի օբյեկտն ամբողջությամբ։ Տվյալ դեպքում այդ օբյեկտը Տիգրան Մեծի թագն է, հզոր Ռայաստանի դրոշմ, հետևաբար նաև՝ ժամանակակից հայոց պետականությունը, որպես վերջինիս ժառանգորդ, իսկ բացասական նշանակություն ունեցող խորհրդանիշը գիսաստղն է։ Սրա հետևանքով համաշխարհային հասարակական կարծիքը նույնպես կընկալի հայոց պետականությունը որպես բացասական երևույթ։

Մենք առաջ ենք քաշում վարկած այն մասին, որ այն մետաղադրամները, որոնց մասին գրված է [1]-ում, կեղծված են և մեր թշնամիների կողմից ստեղծվել են արհեստականորեն։ Տրամաբանական է ենթադրել, որ անդրկուխյան կառույցները կեղծ մետաղադրամները գտնելուց հետո ամեն գնով կփորձեին հայկական միջավայրում գիտնականների և նմուշահավաքների ուշադրությունը գրավել այս կեղծ մետաղադրամների վրա՝ տարբեր մեթոդներով ընդգծելով և ստեղծելով կեղծ տպավորություն, որ դրանք վրա հենց գիսաստղ է պատկերված։ Եվ ուշ թե շուտ այդպես ստեղծվեց հոդված [1]-ը։ Սա նշանակում է, որ այս կեղծ, վնասարար գաղափարը խորամանկորեն ներմուծվեց հայկական միջավայր։

Մենք գտնում ենք, որ դա արված է միտումնավոր, շատ դատապարտելի նպատակներով՝ նույնացնել հզոր հայ պետականությունը աստերոիդական-գիսաստղային վտանգի հետ, դրանով իսկ աշխարհում ստեղծելով ենթագիտակցական դիրքորոշում առ այն, որ հզոր հայ պետականությունը իբրև թե վտանգ է ներկայացնում աշխարհի համար։ Դրանով հոդված [1]-ը միջազգային հանրությանը բացասաբար է տրամադրում Ռայաստանի նկատմամբ՝ մեծագույն վնաս հասցնելով հայ ազգին։ Դա քաղաքական և տեղեկատվական սադրանք է։

Պետք է նշել, որ սույն տեղեկատվական վնասը կարող է վերածվել Ռայաստանի համար քաղաքական և նյութական վնասի։

Եվ, իհարկե, բացի նշված հանցավոր դրդապատճառից, համաշխարհային անդրկուլիսը ունի նաև տեխնիկական հնարավորություն՝ կատարելու այդ կեղծիքը և կեղծ մետաղադրամները թողնելու համապատասխան վայրերում։ Ակնհայտ է, որ մեծ պետությունները և միջազգային անդրկուլիսը ունեն այդպիսի կեղծիքներ կատարելու տեխնիկական հնարավորություններ։

Ռուբեն ԱՆՆԱԿՅԱՆ
Երևանի ֆիզիկայի
ինստիտուտ

Ընթերցող հանրությանը սեղանին է դրված խոստումնալի պատմաբան, պատմ. գիտ. թեկնածու Կարո Աղվանի ժամխարյանի (1986-2016) «Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.» խորագրով ուսումնասիրությունը։ Այն հեղինակի՝ 2015 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանած թեկնածուական ատենախոսության վերամշակված տարբերակն է, որի տպագրված օրինակը նա, ավա՞ղ, չտեսավ։

Սույն գրքի լույս աշխարհ գալը



Ուշագրավ ուսումնասիրություն Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների կրթամշակութային կյանքի և հայապահպանության խնդիրների վերաբերյալ

հարգանքի տուրք է երիտասարդ պատմաբանի հիշատակին։ Աշխատանքը խնամքով, ամենայն բարեխղճությամբ ու նվիրումով հրատարակության է պատրաստել նրա կինը՝ Էթերի Մամուլյանը։ Գրքի խմբագիրը պատմ. գիտ. թեկնածու, ՀՀԳԱ հայոց պատմության ամբիոնի դոցենտ Էդիկ Գևորգյանն է, գրախոսը՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող, պատմ. գիտ. թեկնածու Անի Ֆիշենկոյանը։ Գիրքը հրատարակության է երաշխավորել պատմության ինստիտուտի գիտական խորհուրդը։

Մենագրությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից, անգլերեն և ռուսերեն ամփոփումներից՝ 180 էջ ծավալով։

Գրքի ներածությունում հիմնավորվում են թեմայի կարևորությունը, արդիականությունը, նախանշվում նպատակն ու խնդիրները, տրված է աղբյուրների և գրականության համառոտ վերլուծությունը։ Աշխատության առաջին գլուխը նվիրված է Հայոց ցեղասպանությանը՝ հաջորդող ժամանակահատվածում Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների ձևավորմանն ու հայապահպան առաքելության կազմակերպմանը, այս ասպարեզում Հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցիների, ավանդական երեք կուսակցությունների ու կազմակերպությունների գործունեությանը։ Հեղինակն առաջնակարգ ուշադրություն է հատկացնում հայկական համայնքների ժողովրդագրական նկարագրին, հայերի տեղաբաշխմանն ու թվաքանակին, որբանոցների հիմնադրմանը, կրթական գործի կազմակերպման բնագավառում վերջինների ունեցած նպաստը։ Երկրորդ գլխում ամրադարձ է կատարվում կրթական գործի կազմակերպմանը։ Ցույց են տրվում այս խնդրում դպրոցական, արհեստագործական, մարմնակրթական, հոգևոր կրթության դերը, այդ ուղղվածության կրթական հաստատությունների գործունեությունը։ Հատուկ անդրադարձ է կատարվում Սիրիայում և Լիբանանում գործող Հայ առաքելական, ավետարանական, կաթոլիկ վարժարաններին (այդ թվում՝ կիրակնօրյա դպրոցներին), դրանց ունեցած խնդիրներին՝ կրթական միասնական ծրագրի բացակայությանը, ուսուցիչների մասնագիտացմանը, դասագրքերին, վարժարանների շենքային պայմաններին, դրանց կարգավորմանն ուղղված ջանքերին։ Վերջին գլխում քննարկվում են համայնքների մշակութային կյանքին վերաբերող խնդիրները։ Հեղինակը առանձին-առանձին անդրադառնում է թատերական, գրական կյանքին, պարբերական մամուլին, համագիշ կերպով ցույց տալիս վերջինների անգնահատելի դերը Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների կազմակերպման և հայապահպան առաքելության իրականացման ասպարեզում։

Աշխատանքի արժանիքների զգալի մասը պայմանավորված է հեղինակի օգտագործած մեծաքանակ աղբյուրագիտական նյութով՝ Ռայաստանի ազգային արխիվի և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի պետական թանգարանի ֆոնդերում պահվող արխիվային փաստաթղթեր, հրատարակված աղբյուրներ, հայաստանյան և սփյուռքյան մամուլ, հուշագրություններ, ուսումնասիրություններ։ Ցավոք, Կ. ժամխարյանը հնարավորություն չի ունեցել օգտվելու Լիբանանում և Սիրիայում պահվող արխիվային վավերագրերից։

Ամփոփելով ընդգծենք, որ Կարո ժամխարյանի «Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.» մենագրությունը միանգամայն մոր, թարմ խոսք է սփյուռքային համայնքների կրթամշակութային կյանքի ուսումնասիրության բնագավառում։ Այն աչքի է ընկնում աղբյուրագիտական նյութի բազմաքանակությամբ ու բազմազանությամբ, սահուն, դյուրընթեռնելի շարադրանքով, դրանից բխող գիտական ընդհանրացումներով ու կուռ եզրակացություններով։ Կարծում ենք, որ սույն մենագրությունը երկար ժամանակ փնտրված գիրք կլինի Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների պատմությանը հետաքրքրվող հայագետների և ընթերցասեր հանրության համար։

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող



Երևանում ներկայացվեցին նոր սերնդի դիտակների համակարգով սրացված արդյունքները

Սույն թվականի հունիսի 24-ից 28-ը Երևանում տեղի ունեցավ գերբարձր էներգիաների աստղաֆիզիկայի բնագավառի «MAGIC» միջազգային համագործակցության տարեկան գիտաժողովը, որին մասնակցեցին ավելի քան 60 գիտնականներ Գերմանիայից, Իտալիայից, Իսպանիայից, Շվեյցարիայից, Խորվաթիայից, ճապոնիայից, Չինականացիայից, Բուլղարիայից: «MAGIC»-ը երկու՝ 17 - մետրանոց պատկերային մթնոլորտային չերենկոյան դիտակների համակարգ է՝ տեղադրված Իսպանիայի Լա Պալմա կղզում: Գիտաժողովի ընթացքում ներկայացվեցին «MAGIC» դիտակների համակարգով ստացված նոր արդյունքները, ամփոփվեցին կատարված աշխատանքները, ինչպես նաև քննարկվեցին հետազոտությունների հետագա ուղղությունները: Հունիսի 27-ին տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ժամանակ ներկայացվեցին «MAGIC» և նոր սերնդի՝ 23 մետր տրամագծով «LST» դիտակները, նրանց աշխատանքի սկզբունքները, կառուցման ընթացքում կիրառված բարձր տեխնոլոգիական լուծումները, գիտական ծրագրերը և ստացված կարևոր արդյունքները: Միջոցառման մասնակիցներին ողջունեց ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը: «Անցած տարի Հայաստանում տեղի ունեցած հեղափոխությունից հետո պետությունը որդեգրել է գիտության զարգացման միանգամայն նոր քաղաքականություն: Վստահ եմ, որ այս քննարկման արդյունքներն օգտակար են լինելու, և նոր հրապարակումներ կլինեն, ինչը թույլ կտա ավելի զարգացնել Հայաստանի գիտությունը»,- իր խոսքում մասնավորապես ասաց նախարար Արայիկ Հարությունյանը: ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը, ողջունելով հյուրերին, նշեց. «Հայաստանում աստղագիտության ոլորտի հետազոտությունները միշտ եղել են բարձր մակարդակի վրա՝ պայմանավորված Վիկտոր Համբարձումյանի մեծ ավանդով: Հայ գիտնականները միշտ ներգրավված են եղել

տարբեր միջազգային համագործակցություններում, որի հաջողված օրինակներից մեկն ԻԿՐԱՆԵՏ կենտրոնի մասնակցությունն է «MAGIC» համագործակցության աշխատանքներին: Գիտությունների ազգային ակադեմիան կարևորում է նման գիտաժողովների անցկացումը Հայաստանում, ինչը կարող է նպաստել նոր համագործակցությունների ստեղծմանը»:

Միջոցառման ընթացքում ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Գերմանիայի Մաքս-Պլանկի ֆիզիկայի ինստիտուտի MAGIC խմբի ղեկավար Ռադմիկ Միրզոյանը, Շվեյցարիայի ETH Zurich համալսարանի պրոֆեսոր Ադրիան Բիլանդը ներկայացրին «MAGIC» դիտակների համակարգը, նրանց միջոցով վերջերս ստացված մի շարք կարևոր արդյունքներ և հայ գիտնականների մասնակցությունը «MAGIC» համագործակցության աշխատանքներին: Բարսելոնայի Բարձր էներգիաների ֆիզիկայի ինստիտուտի պրոֆեսոր Մանել Մարտինեսը հանդես եկավ ելույթով «LST» (Large Size Telescope) դիտակի և «CTA» (Cherenkov Telescope Array) համագործակցության մասին:


Միջոցառումը կազմակերպել էր ՀՀ ԳԱԱ ԻԿՐԱՆԵՏ կենտրոնը: ԻԿՐԱՆԵՏ-ը միջազգային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2003 թվականին: ԻԿՐԱՆԵՏ-ի հիմնադիր անդամ-պետություններն են Իտալիան, Հայաստանը, Վատիկանը և Բրազիլիան: ԻԿՐԱՆԵՏ-ի համակարգող կենտրոնը գտնվում է Իտալիայի Պեսկարա քաղաքում, իսկ ցանցի կենտրոնները՝ Հռոմում (Իտալիա), Նիցցայում (Ֆրանսիա), Ռիո դե Ժանեյրոյում (Բրազիլիա) և Երևանում (Հայաստան): ԻԿՐԱՆԵՏ-ի նպատակը ռելյատիվիստական աստղաֆիզիկայի բնագավառում գիտական հետազոտությունների իրականացումն ու հետագա զարգացումն է, ինչպես նաև այդ բնագավառի գիտական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

«Ծագող արևի» բարձրագույն շքանշանը ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Լորդ Դարզին

Լոնդոնի կայսերական քոլեջի հաղորդմամբ մայիսի 21-ին իրաքա-բրիտանահայ ակադեմիկոս Բիլլ Լեյթ-րիստական կուսակցության քաղաքագետ-ակտիվիստ Լորդ Արա Դարզին արժանացել է «Ծագող արևի, ոսկե ճառագայթների» շքանշանին, որը համարվում է ճապոնիայի հնագույն ազգային շքանշաններից մեկը և շնորհվում է կայսրի կողմից ոչ ճապոնացի այն քաղաքացիներին, որոնք աչքի ընկնող ներդրում են ունեցել իրենց բնագավառներում: Դարզին դրան արժանացել է՝ ընդհանրապես համաշխարհային առողջապահությանը և մասնավորապես ճապոնիայում բժշկության զարգացմանը նպաստած լինելու համար:

Վերոնջալ քոլեջում Դարզին գլխավորում է Առողջապահության գլոբալ նորարարության ինստիտուտը 2010-ից սկսած: Այդ ինստիտուտի ուշադրության



կենտրոնում է նորարարական սարքավորումների միջոցով լավագույն վիրահատական միջամտություններ իրականացնելու խնդիրը՝ ապահովելով հիվանդների անվտանգությունը: Իր գործունեության ընթացքում նա խթանել է գիտական գործընկերությունը ճապոնիայի և Միացյալ Թագավորության միջև: 2016 թվին կայսերական (Imperial) քոլեջում նա կազմակերպել է առաջին (նախարարական մակարդակի) գագաթաժողովը՝ նվիրված հիվանդների անվտանգությանը: Իսկ 2018-ին նա արդեն նմանատիպ երրորդ գագաթաժողովն է անցկացրել Տոկիոյում, որտեղ ստորագրվել է հայտարարություն, որն աշխարհի քաղաքական ուժերին պարտավորեցնում է ավելի անվտանգ բժշկական ծառայություններ մատուցել հիվանդներին ողջ աշխարհում:

Նա Լորդերի պալատի անդամ է 2007-ից, իսկ ասպետի կոչմանն արժանացել է 2002-ին: Վերջերս նրա միջամտությամբ ազատ էին արձակվել Ռոյթեր լրատվական գործակալության երկու աշխատակիցներ, որոնք 2017-ի դեկտեմբերին ձերբակալվել էին Միանմարում (Բիրմա), ավելի ճշգրիտ՝ Ռոհինյայում 10 մահմեդականների սպանության գործը հետաքննելու համար:

Հ. Ծ.

ՔԱՂԱՔԱՊԵՏ ԲԼՈՒՄԲԵՐԳԻՐ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼ Է ԴՈԿՏՈՐ ՎԱՐԴԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Ի նշանավորումն Նյու Յորք քաղաքի միգրացիային նվիրված փառատոնի և լեգենդար ներգաղթող էմիգրու Կառնեգիի մահվան 100-ամյակի՝ հունիսի 10-ին քաղաքի «Փլազա» հյուրանոցի Մեծ դահլիճում ավելի քան 200 նշանավոր մարդկանց ներկայությամբ Նյու Յորք քաղաքի նախկին քաղաքապետ Մայքլ Բլումբերգը գերազանցության մեդալով պարգևատրել է դոկտ. Վարդան Գրիգորյանին կրթության, արվեստի և մարդասիրության ասպարեզներում իր բազմաթիվ ձեռքբերումների և հետաքրքրաշարժ անցյալի համար, հաղորդում է վետերան լրագրող Ֆլորենս Ավագյանը «Միտո-Սփեքթեյթ» շաբաթաթերթում:

«Նրան դասում են Ամերիկայի ակադեմիկոս այն ներգաղթողների շարքում, որոնք բարձր պաշտոնների են հասել՝ ձևավորելով այս երկրի մտավոր պատկերը»,- գրում է նա՝ ավելացնելով, որ միջոցառման ընթացքում 1,9 մլն դոլար է հանգանակվել Կարնեգի Հիմնի, որի նախագահն է Գրիգորյանը, երաժշտական և սոցիալական ծրագրերի իրականացման համար:



Նախկինում Վարդան Գրիգորյանը եղել է Փենսիլվանիա համալսարանի երկրորդ օտարազգի ռեկտորը, Նյու Յորքի համրային գրադարանի առաջին օտարազգի նախագահը, Բրաուն համալսարանի առաջին օտարազգի նախագահը:

Հանդիսավարը՝ Կառնեգի Հիմնի գործադիր տնօրեն և գեղարվեստական ղեկավար Քլայվ Ջիլինսոնը, իր խոսքում նշել է, որ մեծ դաստիարակ, ղեկավար և մարդասեր Գրիգորյանը վառ օրինակ է, թե ինչերի կարելի է հասնել բացառիկ տաղանդի, անսահ-

ման երևակայության և անխոնջ նվիրվածության շնորհիվ: Ոչ ոք ավելի արժանի չէր այս մրցանակին, քան Վարդանը: Ներկաների թվում էին Միացյալ Նահանգներում ՀՀ դեսպան Վարուժան Ներսիսյանը, ՄԱԿ-ում ՀՀ դեսպան Միքայիլ Մարգարյանը, Վատիկանում ՀՀ դեսպան Կարեն Նազարյանը, Կառնեգի Հիմնի, Ռոքֆելլեր, Սթար, Ստալդուս Նիարկուս և Սթիվեն Քելեն հիմնադրամների բարձրաստիճան պաշտոնյաներ, Նյու Յորք քաղաքի նախկին կառավարիչ Ջորջ Պատակին, Նյու Ջերսիի նախկին կառավարիչ Թոմ Մկրչինը, ինչպես նաև բարեգործներ Ռուբեն Վարդանյանը, Նուբար Աֆեյանը, Կարո Արմենը, Ասո Դավթյանը, Էդուարդ Ավետիսյանը և Սարգիս Ջեքեջյանը:

Դոկտոր Վարդան Գրիգորյանն իր երախտագիտական խոսքում անկեղծացել է՝ ասելով, որ փորձել է իր կյանքը ձևավորել լեգենդար գրող և ժողովրդավար Ալեքսիս դը Տոկվիլի կյանքի և սկզբունքների հիման վրա:

Հ. ԾՈՒԼԻԿՅԱՆ

ԾԱՆՐՈՑՆԵՐ ԶԻՆՎՈՐՆԵՐԻՆ

Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի (ՀՀ ԳԱԱ) քսանհինգ աշխատակիցների զավակներ ծառայում են Լեռնային Ղարաբաղի տարբեր զորամասերում:

Ակադեմիայի արհեստակցական կազմակերպությունների միությունը (*ԱԿՄ*) նախաձեռնել և ուղարկել է զինվորներին ամենօրյա օգտագործման պարագաներ և քաղցրավենիք պարունակող ծանրոցներ: Այս միջոցառմամբ մեր երախտագիտությունն ենք հայտնում բանակում ծառայող զինվորներին և նրանց ծնողներին, ցանկանում ենք զինվորներին քաջառողջություն, մարտական բարձր ոգի և բարի վերադարձ:

Մեր այս նախաձեռնությանը օժանդակելու համար շնորհակալություն ենք հայտնում Ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի և գրականության ինստիտուտի ղեկավարությանը:

Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԱԿՄ նախագահ
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահի տեղակալ

Կանադացի գիտնականները առաջ են քաշել Հակապիեպերի պետությունը

Տիեզերքը, հնարավոր է, անտիմատերիայից կազմված զուգահեռ աշխարհի «հայելային անդրադարձն» է, գրում է BBC-ին՝ հղում անելով Physical Review Letters ամսագրում տպագրված հոդվածին:

Նման հեղափոխական տեսություն են առաջ քաշել կանադացի գիտնականները: Թեև այս վարկածը գիտաֆանտաստիկ վեպի սյուժե է հիշեցնում, սակայն օգնում է լուծել ժամանակակից գիտության մեջ բացատրություն չունեցող որոշ պարադոքսներ:

Ըստ նոր մոդելի՝ Մեծ պայթյունի ժամանակ երկու «սիմետրիկ» տիեզերք է ձևավորվել: Այն տիեզերքում, որտեղ մարդիկ են ապրում, ժամանակը հոսում է մեզ համար սովորական, իսկ մյուսը՝ «հայելային անդրադարձը», մույս առաջությամբ գնում է դեպի անցյալ:

Մեծ պայթյունի տեսության համաձայն՝ Տիեզերքը առաջացել է մոտ 14 մլրդ տարի առաջ. աշխարհն ընդարձակվել է խիտ և տաք սկզբնական պայմաններից և մինչ օրս էլ շարունակում է ընդլայնվել:

Կանադացի ֆիզիկոսների առաջ քաշած մոդելը ենթադրում է, որ Մեծ պայթյունը սիմետրիայի կետ է համոզիսացել, որի տարբեր կողմերն են ցրվել Տիեզերքն ու Հակատիեզերքը, ճիշտ այնպես, ինչպես էլեկտրոնի ծնվելու պահին վակուումում ծնվում է դրա հակամասնիկը՝ պոզիտրոնը:

Գիտնականները եկել են այն եզրակացության, որ Հակատիեզերքը խիստ մեծ է մեր Տիեզերքին, սակայն դրա ճշգրիտ կրկնօրինակը չէ:



Հայրնաբերվել է 1600 տարվա աստվածաշունչյան խճանկար

Իսրայելի հարավում գտնվող Հուլթոկ հրեական գյուղի 5-րդ դարի սինագոգում հայտնաբերվել է 1600 տարվա աստվածաշունչյան խճանկար, որում պատկերված է Հին Կտակարանի երկրորդ՝ Ելից գրքի տեսարաններից մեկը:

Հնագույն Հուլթոկ հնավայրում պեղումներ են իրականացվում արդեն 9 տարի շարունակ: Առաջին խճանկարներն այստեղ հայտնաբերվել են 2012թ.-ին: 2014-2017թթ.-ին հնագետները հայտնաբերել էին Նոյի տապանը, Կարմիր ծովի բաժանվելը, Բաբելոնի աշտարակը, Հովնան մարգարեին և ձկանը պատկերող և մի շարք այլ հետաքրքրական խճանկարներ:

Ըստ հնագետների՝ խճանկարների առատությունն ապացուցում է, որ շրջակա բնակավայրերում հրեաների կյանքը 5-րդ դարում՝ քրիստոնեական կրոնի գերիշխանության շրջանում, ծաղկում է ապրել:

«Մեր աշխատանքը լույս է սփռում մի ժամանակաշրջանի վրա, որում հուդայականության վերաբերյալ միակ գրավոր աղբյուրները ռաբբիական գրականությունը և վաղ քրիստոնեական գրականության մեջ եղած հղումներն են, հետևաբար՝ հնագիտությունը լրացնում է 4-5-րդ դարերում հուդայականության մասին տեղեկությունները: Այս բացահայտումները ցույց են տալիս, որ այդ կրոնը շարունակել է դիմամիկ գոյատևել Երուսաղեմի երկրորդ տաճարի ավերումից հետո», - նշել է պեղումների ղեկավար, ԱՄՆ Հյուսիսային Կարոլինայի համալսարանի գիտնական Ջոդի Մագնեսը:



Տրոգլոդիտներին պատկանող սպորգեպնյա քաղաք Իրանում

Իրանի հնագետներն սկսել են Համեդին նահանգի Սալեհաբադի շրջանում հայտնաբերված ստորգետնյա հիմնավորք քաղաքի պեղումները: Այն հայտնաբերվել է 3 տարի առաջ, սակայն զանազան պայմաններից հետո պահելու նպատակով դրա մասին միայն հիմա են բարձրաձայնել:

Քաղաքը ենթադրաբար կառուցվել է անտիկ հեղինակների կողմից նկարագրված տրոգլոդիտների կողմից: Այն այս տարածքում հայտնաբերված արդեն 3-րդ մեմատիպ քաղաքն է: Նախորդ երկուսը կառուցվել են Մարաստանի թագավորության ժամանակաշրջանում (Ք.ա. մոտ 700 - 550թթ.):

Հայտնաբերված քաղաքների ճարտարապետությունը վկայում է, որ դրանք կառուցվել են ինչ-որ անհայտ մշակույթի, հնարավոր է՝ տրոգլոդիտների կողմից: Այդ ժողովուրդն ապրել է քարանձավներում, մեկուսացած, չի ունեցել լեզու, շփվել է բացականջություններով, որս արել, երբեմն հարձակվել այլ ժողովուրդների վրա:

Եթե այս վարկածն ապացուցվի, ապա Համեդանյա քաղաքները կարող են դառնալ տրոգլոդիտների գոյության առաջին ճարտարապետական վկայությունները:



Ակադեմիական նոր հրապարակություններ

1. А. Арамян - Очерки истории армяно-испанских литературных и культурных отношений V-XX вв.

2. E. Danielian - Civilizational foundations of Armenia and modern challenges.

3. Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում. գիտաժողովի նյութեր:

4. Ավ. Իսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 6:

5. H. Harutyunyan - Mountainous Karabagh in 1918-1921.

6. Արևելյան աղբյուրագիտությունը և պատմագրությունը ԻԱ դարակազմի Հայաստանում. Միջազգային գիտաժողով նվիրված հայագետ-արևելագետ Արամ Տեր-Ղևոնդյանի ծննդյան 90-ամյակին:

7. Լ. Սարգսյան - Ներդրումների ներգրավման և արտահանման ընդլայնման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում:

8. Մ. Մանուչարյան - Գյուղատնտեսության ապահովագրության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում:

9. Հ. Սարկոսյան - Միջուկային էներգետիկան Հայաստանում. պատմություն, հեռանկարներ, այլընտրանքներ:

10. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXXII(1):

11. Contemporary Eurasia, volume VIII (1):

Իտալացի հայագետ Մարկո Բայսին շնորհվեց ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում

Սույն թվականի հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ նախագահությունը որոշեց ՀՀ ԳԱԱ պատվավոր դոկտորի կոչում շնորհել իտալացի հայագետ Մարկո Բայսին՝ հայագիտության ասպարեզում վաստակաշատ գործունեություն ծավալելու համար:

Մարկո Բայսն աշխատում է Հռոմի արևելագիտության պալական ինստիտուտում, ղեկավարում է հայոց լեզվի բաժինը: Նա աշխատում է նաև Բոլոնիայի համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնում: Մարկո Բայսի դոկտորական ատենախոսությունը նվիրված է եղել հայագիտությանը: Նա շուրջ 60 հայագիտական աշխատության հեղինակ է: Հրատարակել է («Կովկասյան Ալբանիա եթնոսը, պատմությունը, տարածքը՝ ըստ հունական, լատինական և հայկական աղբյուրների») մեծագրությունը, 1969թ. հայերենից իտալերեն է թարգմանել և հրատարակել Փավստոս Բուզանդի Պատմությունը, հրատարակել է Հայաստանի մասին իտալական դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուն (1891-1916թթ.): Իտալիայում կազմակերպել է բազմաթիվ հայագիտական գիտաժողովներ:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

ՀՀ ԳԱԱ-ն կիրատարակի նոր «Հայկական տնտեսագիտական հանդես» գիտական պարբերականը

Սույն թվականի հունիսի 26-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում որոշվեց հիմնադրել «Հայկական տնտեսագիտական հանդես» գիտական պարբերականը: Տնտեսագիտության և կառավարման հիմնախնդիրների գիտահետազոտական աշխատանքների արդյունքների հրապարակման համար ակադեմիական պարբերականի հրատարակումը արդիական է՝ պայմանավորված տնտեսության զարգացման նոր մոտեցումներով: Տարեկան կիրատարակվի հանդեսի 3 համար՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Բացի այդ, լավագույն գիտական հոդվածների հավաքածուն կիրատարակվի անգլերեն լեզվով 1 համարում:

ՀՀ ԳԱԱ «Հայկական տնտեսագիտական հանդես»-ի գլխավոր խմբագիր ընտրվեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսամաթեմատիկական մեթոդների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության դոկտոր Աշոտ Թավադյանը:

ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն

Գիրություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Երևան-19, Մարշալ Բաղդասյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Ստորագրված է տպագրության՝ 23.07.2019 թ.:
"ГИТУТЮН" ("Наука") газета НАН РА